

CROSSIMAGE

ԽԱՉՆԿԱՐ

(արեւմտահայերէն տարբերակ)

(User's Guide)

«Խաչնկար» կոչուող այս ծրագիրը «Ռ՞վ Է ուզում դառնալ միլիոնատեր» խաղի տարատեսակն է, որտեղ ի հարկէ դուք միլիոն չէք շահի, բայց փոխարէնը կը լրացնէք ձեր գիտելիքները հաճելի ժամանցով:

Ծրագրի օգտագործման համար տրամադրուում է 8 խաչնկար, որոնք յետագայում կարող են համալրուել:

SYSTEM REQUIREMENT

Ծրագրի օգտագործման համար համակարգչի առումով որեւէ սահմանափակում չկայ, աշխատում է ներկայումս գործող windows-ի բոլոր տարբերակներով եւ պահանջում է ոչ մեծ յիշողութիւն, որը մատչելի է արդի բոլոր համակարգիչների համար: Այն ամբողջութեամբ ինքնաբաւ է եւ չի պահանջում որեւէ օժանդակ այլ ծրագիր:

ԽԱՉՆԿԱՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Ծրագիրը աշխատացնելու համար սեղմէք “crimwest” icon-ը: Այն բացում է ներածական էջով, որտեղ պէտք է տրուի խաչնկարի համարը: Բացի այս բացատրականից այդ էջում կարող էք ընտրել Էկրանի ձեր նախընտրած գոյնը, հաջորդաբար սեղմելով “color” կոճակը, կամ վերադառնալ սեւ գոյնին սեղմելով “black” կոճակը, իսկ այս բացատրականը տպելու համար սեղմէք “print”:

Այնուհետեւ մտցրէք խաչնկարի ձեր ընտրած համարը (1-8): Սեղմէք “Enter” կամ “start” կոճակը, անցնելու համար ծրագրի հիմնական էջին: (Տուեալ համարի խաչնկարի չգոյութեան դէպքում կը ստանաք “Crossimage number doesn't exist” գրութիւնը: Շարունակէք մուտք անել խաչնկարի ընդունելի համարը):

Արդիւնքում Էկրանին կը յայտնուի նկարի դատարկ պատկերը բաժանուած 64 (8x8) մասերի եւ միաժամանակ 16 հարց, իւրաքանչիւրը ունենալով 4 պատասխան (ABCD): Mouse-ով ընտրելով հարցը, պատկերին կը յայտնուեն ABCD տառերը: Սեղմէք ձեր ընտրած պատասխանը: Շարունակէք նոյնը կատարել միւս հարցերի համար:

Հարցերի ընտրութեան հերթականութիւնը կամայական է, բայց թելադրուում է նախ ընտրել այն հարցերը, որոնց պատասխաններին առաւել վստահ էք:

Որեւէ ժամանակ, երբ նկատէք որ ձեր ընտրած պատասխանը չի համապատասխանում նկարին, mouse-ով սեղմէք նկարին չհամապատասխանող ուղղանկիւնը եւ համապատասխան գունաւորուած հարցից կրկին ընտրէք պատասխանը:

Այս ձեւով շարունակէք փոփոխել նկարը, մինչեւ Էկրանին յայտնուի “Solved” գրութիւնը:

Բարի ժամանց:



Ծրագրի հեղինակ: Օննիկ Փիրումեան

Author: Onnik Piroumian

Tel: (612) 9808 5795 - Email: piroum@ihug.com.au